

**ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ (XVI—XVII դդ.),
ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹՅԱՄԲ 2. ՍԱՀԱԿՑԱՆԻ, ՀՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ,
2. I, ԵՐԵՎԱՆ, 1986, 756 էջ, 2. II, ԵՐԵՎԱՆ, 1987, 882 էջ.**

ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան դրականության ինստիտուտի մականիշով հրատարակված սույն երկհատորյալն ընդգրկում է հայ միջնադարյան դրականության զարգացման վերջին՝ եզրափակիչ փուլի՝ XVI—XVII դդ. բանաստեղծական ժառանգության մեծագույն ու ծանրակշիռ մասը։ Շուրջ երկհարյուրամյա ժամանակ ընդդրկող դրական այս դարաշրջանը բնորոշվում է հարյուրամյոր անվանի ու երկրորդական բանաստեղծ տաղասացների անուններով ու ստեղծագործություններով։

Ուշ միջնադարյան հայ բանաստեղծության առանձին արգասիքների հայտնաբերմամբ ու հրատարակմամբ հայ բանասերները զբաղվել են տակավին XVIII դ. սկզբներից, իսկ առանձին հեղինակների կամ դարաշրջանի բանաստեղծության համեմատաբար ամբողջական ժառանգության հրատարակման լուրջ փորձերը սկսվում են XIX դ. վերջերից (Կ. Կոստանյան) և արգասավոր շարունակություն գտնում հետագայում մի շարք անվանի բանասերների կողմից (Ն. Ակինյան, Տ. Պալյան, Ա. Զուպյան, Մ. Պոտոպյան, Վ. Թորգոմյան, Ս. Նշանյան, Ս. Սիմոնյան և ուրիշներ)։ Առանձին բանաստեղծների ամբողջական երկերի գիտաքննական հրատարակությամբ և ուսումնասիրությամբ աչքի են ընկնում հատկապես սովետահայ բանասերները (Աս. Մնացականյան, Ե. Նազարյան, Մ. Ավդալբեգյան, Ա. Մարտիրոսյան, Պ. Խաչատրյան, Վ. Գրիգորյան, Ա. Գուլուխանյան, Կ. Սուքիասյան և ուրիշներ)։ Այսուհանդերձ, ինչպես արդարացիորեն նշված է քննարկվող երկհատորյալի առաջարանում, հիշյալ դարաշրջանի հայ բանաստեղծության ամբողջական հրատարակությունը մնում էր մեր միջնադարյան գրականագիտության օրակարգային խնդիրներից։ Իսկ այն է, որ նշված զարաշրջանի հայ բանաստեղծների թիվն այնքան բաղձաքանակ է, բանաստեղծություններն այնքան տարաբնույթ, միջնադարյան գրագրերում և տարբեր հրատարակություններում ցրված, որ դրանց հավաքումը, տարբերացված-տարբերակները բաղադրումը, համակարգումը, իրոք, գիտագործնական կարևոր խնդիր է գրական մի ամբողջ պատմաշրջանի բանաստեղծական ժառանգության ամփոփ պատկերը ի մի բերելու և գիտական ու գրական հանրությանը ներկայացնելու առումով։

Նվ. ահա, այդ հույժ այժմեական խնդրի իրագործմանն է ձեռնամուխ եղել սույն երկհատորյալով Հասմիկ Սահակյանը։ Հարկ ենք համարում ընդգծել, որ Հասմիկ Սահակյանի այս դրոժը արդյունք է մի քանի տասնամյակի ծանր ու տքնաշան հետազոտական աշխատանքի։ Գեոե 1950-ական թվականների երկրորդ կեսերին ձեռնամուխ լինելով ուշ միջնադարի հայ բանաստեղծության հետազոտմանը, Հ. Սահակյանը 1961-ին հրատարակում է այդ քննադառնի իր ուսումնասիրության անդրանիկ արդյունքը՝ XVII—XVIII դդ. հայ աշուղների երգերի քննական բաղադրական բնագրերը՝ ընդարձակ հետազոտությամբ հանդերձ, իսկ 1964-ին՝ «Երեմիա Քյոմուսյան» մենագրությունը։ Առավել խորամուխ լինելով դարաշրջանի բանաստեղծական ժառանգության հետազոտման մեջ՝ նա, 1960-ական թվականների սկզբներից, ձեռնամուխ է լինում XVI—XVII դդ. հայ բանաստեղծության քննական բնագրերի ամբողջական ժողովածու կազմելու աշխատանքներին։ Առաջին արդյունքները՝ առանձին բանաստեղծությունների մինչ այդ չհրատարակված բնագրերը, նա հրապարակ է հանում գիտական մամուլում։

XVI—XVII դդ. բանաստեղծության՝ իր կազմած քննական բնագրերի նախնական նյութի ընձեռած տվյալների հիման վրա Հ. Սահակյանը գրում և 1975-ին հրատարակում է «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» ծավալուն մենագրությունը, ուր ամբողջական հետազոտության էին ենթարկված նշված դարաշրջանի բանաստեղծության գրեթե բոլոր արգասիքները՝ իրենց շոշափած թեմաներով ու մոտիվներով, գաղափարական ու գեղարվեստական հատկանիշներով, զարգացման օրինաչափություններով։

Նման տեական ու արգասավոր ճանապարհ է անցել Հ. Սահակյանը ուշ միջնադարի հայ բանաստեղծության մասնագիտական հետազոտության բնագավառում, և նրա հրատարակած երկա երկհատորյալը շուրջ երեսնամյա աղբյուրագիտական, բանասիրական ու տեքստաբանական պրպտումների ամփոփիչ արդյունքն է։

Ձեռնամուխ լինելով երկհարյուրամյա գրական մի բարդ ու խճողված դարաշրջանի բանաստեղծական արգլուներին ամբողջական ու համահավաք ժողովածուի կազմմանը, բնականաբար, հեղինակի առջև պիտի ծառանային բնագրագիտական մի քանի լուծման կարոտ հարցեր: Ամենից առաջ այն, թե ինչ կերպ վարվել այն բանաստեղծների ստեղծագործությունների հետ, որոնք մինչ այդ տարբեր բանասերների կողմից արժանացել էին գիտական առանձին ու ամբողջական հրատարակությունների: Ապա՝ այն բնագրերի հետ, որոնք թեպետ հրատարակված, բայց ձեռագրային տարբերակների լիակատար ընդգրկման առումով պակասավոր էին: Եվ, վերջապես՝ այն բանաստեղծների նկատմամբ, որոնց ոտանավորները անարվեստ ու անարժեք ստեղծագործություններ էին:

Հարկ է նշել, որ Հ. Ասահկյանը այս ե նման հարցերի վերաբերմամբ առաջնորդվել է միանգամայն իրավացի սկզբունքներով:

Եվ որովհետեւ ինքը տվյալ ժամանակաշրջանի հայ բանաստեղծական ժառանգության ոչ թե սոսկ ժողովող, համակարգող է, այլ յուրաքանչյուր բնագրի տարբերակների համադրող ու ըննական բնագրի կազմող, ուստի այլոց կատարած աշխատանքը չերկրորդելու կամ զանց շառելու նպատակով՝ նա հատորներում չի զետեղել մի շարք բանաստեղծների (Քր. Աղթամարցի, Հ. Սեբաստացի, Սիմ. Ապարանցի, Ն. Մոկացի, Մարտ. Ղրիմեցի, Ն. Հովնաթան, Ստ. Ռաշտեցի, Պալ. Ամասիացի) երկերը, որոնց համեմատական բնագրերը նախկինում կազմված են եղել առ բանասերների կողմից և առանձին գրքերով հրատարակված: Հատորներում չեն ներառվել նաև այն առանձին գրքով ձևերը (պատմական ողբեր, վիպական մեծադիպեր երկեր, տաղեր, և այլն), որոնց քննական բնագրերը, դարձյալ նախորդների կողմից, կազմվել են ու հրատարակվել: Հատորներից դուրս են թողնվել նաև առանձին հեղինակների կամ հատորներում տեղ գտած որոշ հեղինակների առանձին ոտանավորներ, որոնք եղել են անցյալի բանաստեղծների երկերի անարվեստ կրկնություններ: Բայց, կարևորն այն է, որ նյութի մատենագիտական ամբողջությունը պահպանելու: նպատակով՝ նման հեղինակների ստեղծագործությունների անուններն ու աղբյուրները առանձին ցանկերով դրվել և ծանուցվել են հատորների վերջում: Իսկ բանաստեղծական այն երկերը, որոնք անցյալում հրատարակվել են մեկ կամ մի քանի ձեռագրային սկզբնաղբյուրների հիման վրա, բայց ունեցել են այլ ձեռագրերում պահպանված շատ տարբերակներ, ներառվել են հատորներում, բաղադրվել այդ տարբերակների կամ հրապարակումների հետ, միշտ նախորդ հրապարակումների համապատասխան նշումներով:

Նման ընտրությունով ու հապավումներով հանդերձ, քննարկվող երկհատորյակում տեղ են գտել ուշ միջնադարի 156 անվանի ու անանուն բանաստեղծ, իրենց 366-ի հասնող բանաստեղծական մեծ ու փոքր ստեղծագործությունների քննական-բաղդատական բնագրերով: Այս մեծագրական ստեղծագործությունների բաղդատական բնագրերը կազմելիս Հ. Սահակյանը կատարել է աղբյուրագիտական վիճարկի աշխատանք և ցուցաբերել տեքստաբանական պատշաճ հմտություններ: Նախ՝ նա զննել է վերջին երկհարյուրամյակի պարբերական մամուլն ու տպագրի այլազան հրատարակությունները, ապա աշխարհասփյուռ հայկական ձեռագրերի ցուցակները, Մաշտոցի անվան մատենադարանի հարուստ ձեռագրերը և դրանցից դուրս քաղել ուշ միջնադարի բանաստեղծական նմուշներն ու դրանց վերաբերող անհրաժեշտ տվյալները: Քննական բնագրերը կազմելիս նա հիմք է դարձրել առավելաբար Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերը, ապա երկրորդաբար՝ ձեռագրացուցակներում կամ այլ հրատարակություններում տպագրված նմուշները, արտասահմանից ստացված ձեռագրերի սակավաթիվ մանրամասնումները: Այդ տարաբնույթ աղբյուրների բնագրային տվյալների համագիր բաղդատումներով Հ. Սահակյանը կազմել է յուրաքանչյուր ստեղծագործության քննական բնագիրը: Ինչպես նշված է I հատորի առաջաբանում, քննական բնագրերի համար առհասարակ հիմք են ընդունվել հնագույն և առավել ամբողջական օրինակները, իսկ վերջիններիս թերի կամ խաթարված լինելու դեպքում՝ համեմատաբար հին ու անաղարտ նմուշները: Բնագրերում կատարված որոշ անհրաժեշտ ճշտումներ, ճշգրտումներ, միշտամտություններ արվել են բաղդատական տարբերակների թեմատիկայով: Այս կերպ բաղդատված ու ճշգրտված յուրաքանչյուր բնագրի տողատակերում, եթե այն միակ վկայված օրինակը չէ, գիտական տեքստաբանության ընդունված սկզբունքներով հերթականորեն բերված են խորագրային և բնագրային (բառային, դարձվածային, տողային) տարբերակները՝ կազմողի ուղեցուցային ճշգրտիչ նշումներով: Բնագրերում երբեմն հանդիպում են թուրքերեն կամ պարսկերեն տողեր ու տներ, որոնց բառացի թարգմանությունը դաշձյալ տրված է տողատակերում:

Քննական բնագրերի ձեռագիր ու տպագիր աղբյուրները՝ բնագրագիտական ու բանասիրական անհրաժեշտ դիտողություններով, դրված են հատորների վերջում, բնագրերի հերթական

հասարակություններով: Հատորներում ընդգրկված բանաստեղծների կենսագրությունները՝ հայտնի ու վիճելի տվյալներով, ես դրված են հատորների վերջում՝ ըստ հերթականության: Հատորներն օժտված են նաև օգտագործված աղբյուրների, դրականության, պարբերականների ցուցակներով, անձնանունների, տեղանունների, հատորներում զետեղված բանաստեղծությունների առաջին տողերի այբբենական ցանկերով և բնագրերում հանդիպող ասար ու դժվարասկանալի բառերի լրացատրական բառարաններով (հեղինակ՝ Օ. Եզանյան): Հատորներն ունեն նաև հեղինակային սեղմ առաջարկներ, ուր շարադրված են աշխատության աղբյուրագիտական տվյալներն ու բնագրագիտական սկզբունքները:

Աղյուսակով՝ 2. Սահակյանի «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը մեծածախլ երկհատորյակը՝ զրական, բանասիրական, տեքստաբանական ու աղբյուրագիտական մի լուրջ ու ամբողջական աշխատություն է, որի կարիքը մեզանում վաղուց էր զգացվում: Աշխատության առաջին ու կարևորագույն գիտական արժանիքն այն է, որ տարբեր աղբյուրներից հավաքված, ժամանակագրորեն դասակարգված, ի մի են բերված հայ միջնադարյան զրականության վերջին շրջափուլի՝ XVI—XVII դդ. բանաստեղծական հարուստ ժառանգությունը, մեկուկես հարյուրից ավելի հեղինակներով, նրանց ստեղծագործությունների ընդհանուր ճշգրտված բնագրերով: Եվ երբ նկատի ենք առնում, որ երկհատորյակում ամփոփված բանաստեղծական այդ մեծածախլ նյութը, ցրված լինելով ձեռագրական ու տպագիր ամենատարբեր աղբյուրներում, ցարդ մենում էր դժվարամատչելի ոչ միայն մեր անցյալի դրական ժառանգությանը հետաքրքրվողներին, այլև անդամ մասնագետ հետազոտողներին, ապա պարզ կդառնա զրապատմական այն մեծ նպաստը, որ բերում է սույն երկհատորյակով 2. Սահակյանը հայ միջնադարագիտությանը:

Աշխատության հաջորդ կարևոր արժանիքն այն է, որ նրա էջերում տեղ են գտել միջնադարյան զրնգներից հանված զգալի թվով բանաստեղծական նոր ստեղծագործություններ, որոնք առաջին անգամ են արժանանում հրատարակության: Դրանով գիտական ու զրական շրջանառության մեջ են դրվել նորանոր երկեր՝ ընդլայնելով ու ամբողջացնելով մեր փաստական իմացությունները հիշյալ դարաշրջանի զրական ժառանգության մասին:

Եվ, ի վերջո, նկատի առնելով երկհատորյակում ընդգրկված բանաստեղծական նյութի բովանդակությունը, հարկ է ընդգծել կարևորությունը նրանում արտացոլված պատմական, մշակութային, շահանդական այն բազմաշերտ անդրադարձումների, որոնք վերաբերում են միջնադարյան հայ բնաշխարհի ու տարաշխարհի կյանքին, կենցաղին, ազգային ու անհատական մտորումներին, զգացումներին, ձգտումներին ու հոգեբանությանը: Դրանով այս աշխատությունը ձեռք է բերում նաև պատմաճանաչողական կարևոր սկզբնաղբյուրի արժեք ուշ միջնադարի հայտնի պատմության համար առհասարակ:

2. Սահակյանը քննարկվող աշխատությանը շնորհալի ծառայություն է մատուցել հայագիտությանը, որը պետք է գնահատել ըստ արժանիության:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր